ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Տպավորությունները բավմապիսի են եւ բավմերանգ: Բայց ամեն բան մաղթել կտեղելէ ետք, անվարան պիտի ըսեմ, որ այդպիսի կենտրոնի մեր գոյությունն իսկ ոգեւորիչ երեւույթ է, իսկ այստեղ աշխատող տղաքն ու աղջկերքը՝ մեր յոյսն ու յենարանը:

Բոլորիդ կյանկամ երջանկություն, երկար կեանք եւ մանավանդ ՅԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ եւ ԿԱՄՔ: Կմեկնիմ լաւագոյն տպավորութիւններով եւ ձեր մօտ կը թողամ լավագոյն ու ջերմ մաղթանքներ՝ կեանքի բոլոր մարվերու մեջ լաւագոյնին համար:

Արտագին ողջյուններով Համակարգիչներու Ակումբի Հայաստանի Մասնաճիյղի թիվ 1 անդամ՝ Ալաճաճյան Գրիգոր

Հոկտեմբեր 26, 1989 թ.

Համակարգչի մուտքը դպրոց մեծ աշխուժություն առաջացրեց:

Երեքշաբաթյա (13.10-27.10) դասընթացների ընթացքում երեխաները ոչ միայն ծանոթացան սարքի գործունեությանը, այլեւ կարողացան կատարել ծրագրավորման աշխատանքներ: Մեր խորին շնորհակալությունը ինչպես Հայկական Օգնության Կոմիտեին, այնպես էլ «Որոնում» կենտրոնին ընձեռած հնարավորության համար: Միայն մեկ ցանկություն. հաճելի կլիներ, եւ միաժամանակ ուսանելի, եթե դասընթացների ժամկետը երկարացվեր:

Երեւանի Մ. Գորկու անվան համար 4 միջն. դպրոցի դիրեկտոր՝ / Ա. Ավագյան / 27.10.89թ. ք.Երեւան

Կոմպյուտերային ուսուցումը համար 74 միջնակարգ դպրոցում մեծ հետաքրքրություն առաջացրեց աշակերտների շրջանում: Երկու շաբաթվա ընթացքում նրանք յուրացրեցին ծրագրի կգալի մասը, որը նպաստեց առարկայի դասավանդմանը: Արտասահմանի հյուրերի կողմից այս օգնությունը մեկ անգամ եւս ամրապնդեց Սփյուռքում գտնվող հայերի կապը մայր Հայաստանի հետ: Լավ կլիներ, որ կոմպյուտերը մշտական իր գրանցումը գտներ դպրոցում, որպեսզի աշակերտները խորացնեն իրենց

գիտելիքները:

Դպրոցի դիրեկտոր՝ / Մարտիրոսյան / 24.10.89թ.

Մեկ համար ամենից շատ երջանկալի հաճույքը առաջին հերթին մեր Հայաստանում լինելն էր: Դժվար է ապրիլ արտասահմանում՝ մայր հողից կտրված: Մենք մեր բավմաթիվ ընկերներից բախտավոր եղանք՝ Հայաստանում լինելու առիթը ունենալով:

Դրանից բացի մենք առիթ ունեցանք շփվելու Հայաստանի եւ Ղարաբաղի սքանչելի մեր ժողովրդի հետ: Մեր բավմապիսի զգացումներն ու տպավորությունները կփոդանցենք մեր ընկերներին՝ հաստատելով որ կա կենսուրախ եւ ուժեղ հայություն, որ ամուր կանգնած է հայության իրավունքների նվաճման դիրքերի վրա:

Մեր այս շփումը երեւի հնարավոր չլիներ եթե գոյություն չունենար «Որոնում» կենտրոնը, որը ոչ միայն մեր այստեղ հասնելու մեջ մեծագույն դեր կատարեց, այլեւ մեկ հույրընկալեց: Գործնական թե ընկերական հարաբերությունների մեջ մենք մեր դիմաց գտանք հայության հարցերով մտահոգ մարդիկ, որոնք ինչ-որ չափով իրենց ուսերի վրա են վերցրել մեր ազգի ցավերը: Մենք մեկ հետ կտանենք ամենաջերմ զգացումները թե «Որոնում» կենտրոնից եւ թե նրա աշխատակիցներից: Ինչ խոսք, որ շնորհակալ ենք երկու ամսվա այս գործակցության համար:

Հայաստանում կրկին հանդիպելու հույսով կմեկնենք երեւանից:

Համակարգիչների ուսուցման գծով Հայաստան եկած ՀՕՄ-ականներ

29. 11. 1989թ.

Որոնում կենտրոնը շատ հետաքրքրական հիմնարկություն է իր սահմանափակ միջոցներով առաջադրած է կարեւոր աշխատանքներ կատարելու, որոնցից մեկը երկրաշարժի աղետյալների ցանկը պատրաստելն է, իսկ մեր համակարգիների ակումբ կհաստատի, որ ուզում է կապել գաղթօջախի հայության հետ եւ օգնել արտասահմանի մեր հայրենակիցներին սերտ

կապեր պահել հայրենիքի հետ եւ կորացնել հայրեն լեզվի ծանոթությունը:

Այս հոյակապ ծրագրերի գործունեությանը հանձն առած է մի խումբ ժրաջան երիտասարդների առաջնորդ պարոն Գրիգոր Վահանյանը:

Մենք մեր պարտքը կհամարենք ոչ միայն քաջալրել կենտրոնի աշխատանքները, այլ նաեւ օգնել կենտրոնին կոմպյուտերի մասին մեր դասավանդությունների փորձը հաղորդելուն:

Մտադրված ենք վերադառնալ:

08.12. 1989թ.

Վարուժան Դմիրճյան, Երեւան

1989թ.նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 11-ը Երեւանի համար 185 միջն. դպրոցում միջազգային կոմպյուտերային ակումբի աշխատակիցներ պ. Վարուժանի եւ պ. Հրաչյայի ղեկավարությամբ կազմակերպվեցին համակարգիչների ուսումնասիրության դասընթացներ: Այն մեծ հետաքրքրությամբ ընդունվեց մանկավարժական եւ աշակերտական կոլեկտիվների կողմից: Աշակերտները նպատակային հետաքրքրությամբ մասնակցեցին դասընթացներին՝ լիովին ծանոթանալով համակարգիչների աշխատաքար պրոցեսներին: Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի «Որոնում» կազմակերպությանը, խորապես երախտապարտ ենք պ. Վարուժանին եւ պ. Հրաչյային:

Դպրոցի դիրեկտոր / Գ. Սահակյան / 11.12.89թ.

1989 թվականին դեկտեմբերի 9-ին Երեւան եկայ Լոս-Անջելեսի ՀՕՄ-ի (Հայ Օգնության Միություն) եւ Որոնում կենտրոնի միջեւ եղած համակարգիչ մեքենաների դասավանդության վերաբերյալ համաձայնութիան հիմունքով:

Խիստ ուրախալի երեւույթ է Սփյուռք-Հայրենիք կապերը օգտագործելու որպեսզի մենք Սփյուռքեն կրնանք օգտակար ըլլալ

հայրենիքին, մեր գիտելիքները փոխանցելու նպատակով:

Իմ դասաւանդութիւնս եղաւ Լենինական քաղաքի մեջ հունգարացիներու կողմէ կառուցուած միջնակարգ դպրոցի մեջ:

Ես մեծ յաճուլքով ծանոթացայ նաեւ կենտրոնի մնացիալ բոլոր աշխատողներուն. բոլոր ալ շատ կրթված են, եւ ուրախ եմ որ մենք հանդիպեցանք ու յուսամ, որ մեր հանդիպումները պիտի կրկնվին:

Մեծ ուրախութիամ եկայ Հայաստան, այս իմ առաջին անգամն էր, որ Հայաստան կայցելէի, վերադառնամ կը յուսամ, որ շուտով նորից առիթը պիտի ընծայիք որ նորին հանդիպինք նորին օգնելու ինչպես որ կրնամ:

Տիգրան Տեր-Սաֆարեան

Ամերիկային Լոս-Անճելլըս Կլինտէլ քաղաքին

Դեկտեմբեր 22, 1989

Մեր դպրոցի կյանքում հիշարժան օրեր շատ են լինում, բայց այս մեկը ընդմիշտ կմնա կամ քաղաքի համար 1 միջն. դպրոցի աշակերտության եւ մանկավարժների հիշողության մեջ: Այդ 10 օրը, երբ մեկ մոտ էին գտնվում Սան-Ֆրանցիսկոյից ժամանած մեր հայրենակիցները՝ Զարեհ եւ Հասմիկ Սամորգաշյանները, մեծ տոն էր: 5-6 դաս բոլոր աշակերտները մասնակից եղան համակարգիչի աշխատանքներին, նրանք մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում եւ աշխատում սովորել կոմպյուտերի վրա գտնվող գործողություններին: Զարեն եւ Հասմիկը մեկ հրապուրեցին իրենց մարդկային բարձր հատկանիշներով, մանկավարժական վարպետությամբ: Նրանք ծանոթացան մեր քաղաքին, Սեւանի ավազանի տեսարժան վայրերին, սիրեցին մեր ժողովրդին, նրա սովորությունները եւ պատրաստակամություն հայտնեցին լինել մեր բարեկամը: Մեր մեծ շնորհակալություն ենք հայտնում կոմպյուտերի ակումբի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն ընկ. Գ. Վահանյանին եւ ընկ. Ա. Ղուկասյանին, մեկ այսպիսի մեծ հնարավորության համար եւ կխնդրեինք նման միջոցառումներ հաճախակի կազմակերպվեն.

Դպրոցի տնօրեն՝ / Ռ. Հասասյան / 15.12.89թ.

Խորին շնորհակալութիւն կ՚ուզինի յայտնիլ Որոնումի կենտրոնի մեր բոլոր ընկերներուն որ այս իվակի առիթը ստեղծեցին որպեսզի գանք Հայաստան եւ աշխատինք հայ աշակերտներու հետ:

Դեկտեմբերի 15, 1989-ին հասանք Կամօ քաղաքի N 1 դպրոցը կոմպյուտերներու մասին 10 օրոայ դասընդացի մը տալու բարձրագոյն դասարաններուն:

Աշակերտները շատ ուշիմ ու արդուն էին:

Գալով ուսուցիչներուն եւ Կամօի ժողովուրդին իրենց հիրընկալութիւն եւ ջերմ յարաբերիրութիան սահման չկար:

Յասմիկ եւ Զարիհ Սամարգոշիաններ

Ամերիկայի Սան Ֆրանցիսկոի քաղաքին

Դեկտեմբեր 27, 1989